

Այդ պատճառով, Ազգային և Հանրապետական Պատերազմութիւններէ ջուրը հէնց սկզբից միեւնոյն առուով չղնացին: Առաջին խոյ օրից սև կատու անցաւ նրանց միջև, և թէև, ժամանակի ընթացքում, կարելի եղաւ ստեղծել ձևական դործակցութիւն և աշխատանքի ընդհանուր ճակատ, հոգեկան մօտիկութիւնը, անկեղծութիւնն ու յարաբերութիւններէ շիտակութիւնը մինչև վերջ էլ բացակայեցին: Ո՞վ էր մեղաւորը, կամ, աւելի ճիշտ, ո՞ր կողմն էր աւելի մեղաւորը այդ հիւանդոտ դրութեան համար—մինչև այսօր էլ մէկը ամբաստանում է միւսին: Եւ քանի երկու պատերազմութեանց դործունէութեան մանրամասն տեղեկագրերն ու վաւերագրերը չեն հրատարակած, անկարելի կը լինի ճշտել պատասխանատուներն ու պատասխանատուութեան չափը, ինչպէս, առհասարակ, պատմութեան ա՛յս փուլի մէջ և ներկայ տեսլանքով դժուար է պատասխանատուութիւնների ճշտումը: Բայց մեր գործի համար այդ այնքան կարևոր էլ չէ. էականը փաստի արձանագրութիւնն է — եզրակացութիւնը թող ուրիշներն անեն: Իսկ փաստը՝ մթնոլորտը Փարիզում լաւ չէր:

Ազգային Համագումարը կոչւած էր մաքրելու այդ մթնոլորտը և ազգային դործերը դնելու առողջ հիմքի վրա, բայց յաջողութիւն չունեցաւ. նա, ոչ իր կողմով, ոչ էլ մտայնութեամբ կարող էր նման դեր կատարել:

Նախ կազմը: Համագումարը ներկայացւած էր հետեւեալ ձևով. Պալիս՝ Եղիշէ արք. Դուրեան, փրոֆ. Ա. Տէր-Յակոբեան, դոկտ. Ա. Բարսեղեան, Գ. Սինապեան, Պօղոս բէյ Մսրը, Կովկաս՝ (արևմտահայ փախուստականների կողմից) Վ. Փափագեան, Ա. Թէրզիպաշեան, Լ. Շանթ, Եգիպտոս՝ դոկտ. Նեվրուզ, Վ. Թեքէյեան, Բուլղարիա՝ դոկտ. Սայեան, Ս. Հինդլեան, Պարսկաստան՝ Յ. Պան Մասեհեան, Մ. Վարանդեան, Անգլիա՝ Գ. Յակոբեան, Գ. Ֆնտըլեան, Հնդկաստան և Ճաւա՝ Պօղոս փաշա Նուպար, Զւիցերիա՝ Գ. Նորատունդեան, Իտալիա՝ դոկտ. Ն. Տէր-Ստեփանեան, Վենետիկ՝ Յովհ. վարդ. Թորոսեան, Ռումանիա՝ Մ. Տէրպէտէրեան, Ֆրանսիա՝ Ն. Խան Ներսէսեան, Տ. Խան Քելէկեան, Ամերիկա՝ Ե. Աղաթօն, Մ. Համբարձումեան, Զ. Մաթիկեան, Ա. Միքայէլեան, Միջագետք՝ Ե. Տէրվիչեան, փրոֆ. Ա. Պաշաբեան, Հայէպ և Այնթապ՝ դոկտ. Ալթունեան, Յունաստան՝ Յ. Մոսաիչեան, անդամ Ազգ. Պատերազմութեան՝ Ճ. Մալքոմ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ամերիկայի ներկայացուցիչ՝ Գ. Փաստրոմաճեան, հրաւիրւածներ՝ Մ. Տամատեան, Ա. Զոպանեան, Ա. Հանրմեան, Մ. Ս. Դաւիթ բէգ, փրոֆ. Կ. Թումանեան, Հ. Հ. Պատերազմութիւնից՝ Ա. Ահարոնեան, Հ. Օհանջանեան՝ խորհրդակցական ձայնով:

Այս 4 անձից հազիւ 4—5 հոգին կարող էին ասել, թէ իրենք, որոչ չափով, արտայայտում են Հայաստանի ժողովրդի բաղձանքները. միւսները բոլորը վաղուց գաղութներում ապրող մարդիկ էին՝ բոլորովին անձանօթ երկրի պայմաններին և հայ ժողովրդի կացութեան: Նրանցից շատերը — անգամ ամենապատասխանատու դիրքեր գրաւողները — Հայաստանի երեսն անգամ չէին տեսել, Հայաստանի աշխարհագրութեան, տնտեսական կարո-